ՅԱՒԵԼՈՒԱԾ Զ

ԲԱՂՈՒԱԾՔ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ Տ. ՍՏ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԱՒԱԳԵՐԻՑՈՒ ԿԱՄԵՆԻՑԱՑ

1350. Հայք Կամէնցացիք յայսմ ամի սկսան ի ձեռն բրիվիլեկաց (privilège) թագաւորացն Լեհաց, զդատարանս առնել. մինչ զի կարող եղեն և զմահապարտսն մեռուցանել, առանց հրամանի կամ թոյլտուութեան Լեհաց։ — Մոհրն (կնիք) նոցա։

Լէոպոլիս քաղաքն Լեհաց վերսային հաստատեցաւ և նորոգեցաւ ի Գազիրէ Մեծէն Լեհաց թագաւորէն։

1363. Աթոռակալ եկեղեցին Հայոց որ ի Լէոպոլիս՝ կատարեցաւ յայսմ ամի, և գրեցաւ կոնդակ նորին, օգոստոս 3։ Հիմնողք նորին եղեն Յակոբ Շահինշահի որդին Կաֆայեցի, Փանոս որդի Աբրահամու Հալաչեցի։

1365. Յոհաննէս առաջին արքեպիսկոպոս Լէոպոլսի Հայոց, յայսմ ամի սկսանի զառաջնորդութիւնն Հայոց ի Լեհաստան (1)։

1384. Գրիգոր արքեպիսկոպոսն Լէոպոլսի Հայոց՝ էր յայսմ ամի, ասէ Եղու Հէրպ. բայց է սխալութիւն. զի Յոհաննէսն Ա՝ էր կենդանի (յամի) 1398. եթէ ոչ և միւս Յովհաննէս զկնի Գրիգորիս նստեալ իցէ։ Տես 1420 և 1446։

1398. Տէր Յովհաննէս առաջին արքեպիսկոպոսն Լէոպոլսի Հայոց՝ քանզի յառաջ քան զսա՝ զայլ ոք արքեպիսկոպոս ոչ ուրեք կարացաք գտանել, — զոր ոմանք ի թագաւորական ազգէ եղեալ ասեն, — սա ոչ միայն Լեհցւոց՝ այլ և Պուղտանաց երկրի Հայոց առաջնորդ էր. որպէս յայտ է ի մագաղաթեայ կոնտակէն կառուցման եկեղեցւոյն Ս. Նիկողայոսի՝ որ ի Կամենից. յորում

1. Կոնդակ Մեսրովբայ կաթողիկոսի (տես յերես 3 գրոցս) այսու թուականաւ զԳրիգոր կարգէ առաջնորդ Լեհահայոց։